

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՈՒՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«ԱՌԱԿԱՅՆ» ԱՌԱՋԻՆ ՆԵՐԹԻՆ ԹԱՐԳՄԱՆԵԼՈՒ ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Նայագիպության մեջ դեռևս համակողմանի քննության չի արժանացել այն հարցը, թե ինչո՞ւ Մաշպոցը Սուրբ Գրքի թարգմանությունը սկսեց Սողոմոնի խրապներից՝ դրանով իսկ առաջնային նշանակությունը տալով իմաստության գրականությանը: Այս հարցադրման վերաբերյալ արտահայտվել են միանգամայն հակադիր կարծիքներ. ըստ անվանի հայագետ Ֆ. Կոնիբերի՝ «Թեև մի հասարակ պարահմունք է, որ Մեսրոպը թողնելով Աստվածաշնչի ավելի կարևոր գրքերը, իր գործը սկսել է նվազ կարևորից: Ասորիքում հայերեն այբուբենը գրականության հետևողական ձևերն է ընկել «Աստվածաշնչի» երկ-հատոր ձեռագրի այն մասը, որ սկսվում էր առակների գրքից և դրա համար նա իր թարգմանությունը սկսել է այդպեղից»¹: Իսկ ակադեմիկոս Ա. Ղանալանյանը, նկատի առնելով Մաշպոցի՝ մեծ քարոզիչ, գիտնական, լուսավորիչ ու մանկավարժ լինելը, գրել է. «Այն հանգամանքը, որ Մեսրոպ Մաշպոցը հայերեն տառերի սրբազանության անմիջապես հետևողական հերթին նպատակահարմար է գտել թարգմանելու ոչ թե Նոր կրակարանը, այլ՝ ավանդական Սողոմոն Իմաստունին վերագրված առակների հայերեն ժողովածուն, ունի իր լուրջ հասարակական պարզաբանությունը»²: Ընդգծելով, որ խրապները վերագրվել են Սողոմոնին, Ղանալանյանը, սակայն, «Առակացը» համարել է ««հին եբրայեցիների թեոլոգիական խոսքերից կազմված ժողովածու», միաժամանակ չանդանդակելով այն փաստը, որ խրապների նմանությունների և ընդհանրությունների զգալի մասը բնորոշ է աշխարհի գաղափարական վայրերում ապրող ժողովուրդների ավանդական բանահյուսությանը. «Նայ ժողովրդի առաջին մեծ լուսավորիչն այդ արել է իր սիրեցյալ աշակերտներին և ընդհանրապես իր ազգակիցներին մատչելի, հեշտապրքի ձևով ու բովանդակությամբ, ու միաժամանակ հասարակական-բարոյական նշանակալից արժեք է խրապական-դաստիարակչական նշանակություն ունեցող գիրք տալով լինելու համար»³: Գիտնականի սույն միտքը հուշում է՝ հարցը նորովի քննել հենց այս պոստանկյունից:

Մաշպոցի ծավալած մանկավարժական և լուսավորական բեղուն գործունեություն-

1 F. Koniber, Armenian Version of the old Testament, Dictionary of the Bible, I, 1898, p. 153.

2 Ա. Ղանալանյան, Թե ինչո՞ւ Մաշպոցը թարգմանեց Սողոմոնի առակները. «Ժանեթ Մարենադարանի», ք. 7, Երևան, 1964, էջ 114:

3 Անդ, էջ 122: Ընդգծումը՝ Ռ. Պ.:

նը, նրա երկարամյա շփումը ժողովրդի հետ, անշուշտ, նրան պիտի թելադրեր առաջին հերթին թարգմանել գրականության այն տեսակը, որն ավելի հասկանալի ու մարչելի կլիներ հայոց այբուբենը նոր սերպած աշակերտներին: Այս առումով պետք չէ բացառել, որ «Առակաց» գրքի շարք խրատներ բանավոր թարգմանությամբ վաղուց ի վեր փարածված են եղել Նայաստանում, չպետք է անտեսել նաև սերունդներին խրատական գրականությամբ կրթելու հինարևելյան դարավոր ավանդույթը, որ խստորեն պահպանվել է նաև միջնադարում: Այսպես, հարկ է հիշել, որ **խմասպություն և խրատ** ճանաչելու պարզամբ հնագույն ժամանակներից ի վեր առաջինն է եղել թագավորների դպիհների կազմած խրատանիներում, որոնք որպես մեծարժեք ժառանգություն փոխանցվել են արքայական տոհմերի սերունդներին:

Նինարևելյան խրատական գրականության ակունքները, ինչպես գիտնք, սկիզբ են առնում շումերներից, որոնց թողած գրական ժառանգությունը մեզ օգնում է բացահայտելու հարցի էությունը՝ համեմատություններ անցկացնելով եգիպտական, արամեական, հրեական, հունական, պահլավական, արաբական խրատական գրականությունների միջև: Մեզ են հասել շումերական երեք ժողովածուներ՝ «Ագարակալիքոջ փարեցիքը», «Շուրուպակի խրատներն իր որդի Զիուսուդրային», «Բարոյական և էթիկական խրատների պատարիկները», որոնցից Շուրուպակի խրատները համարվում են այդ հնագույն ժողովրդի խմասպությունն ու կենսաճանաչողությունն արտացոլող փայլուն նմուշներ⁴: Դրանք կազմվել են Ք. ծ. երկու հազար տարի առաջ և վերագրվել են Շուրուպակ արքային, որը շումերական Նոյի՝ Զիուսուդրայի հայրն է եղել: Խրատների ամբողջական նյութը բաղկացած է շուրջ յոթ հարյուր հարվածներից, որոնց մեծ մասն անհայտ է եղել մինչև 1958 թվականը: Շուրուպակը 280 խրատ է փոխադրում՝ իր խոսքը սկսելով արձակ բանաստեղծությամբ բնորոշ հետևյալ փողերով. «Այն օրերին, այն հեռու-հեռավոր ժամանակներին, այն գիշերներին, այն երագային գիշերներին, այն փարիներին, այն անհիշելի փարիներին, մի խմասպուն մարդ էր ապրում երկրում: Նա կարողանում էր խոսել ճիշտ ընտրված բառերով և խրատներ էր փոխադրում իր որդի Զիուսուդրային. «Որդյա՛կ, թույլ տուր քեզ խրատներ փոխ. դու պետք է ուշադրություն դարձնես: Մի՛ հրաժարվիր իմ խրատներից: Մի՛ անտեսիր իմ խոսքերը: Տարեց մարդու խրատները կարևոր են, դու պիտի ընդունես դրանք»: Խրատների զգալի մասը բարոյական բնույթի են, սակայն հանդիպում են նաև խիստ առօրեական, գործնական խրատներ, ինչպես օրինակ՝ «Քո տունը մի կառուցիր հրապարակի մոտ, այնտեղ միշտ մարդաշատ է» և այլն:

Ուշագրավ է այն իրողությունը, որ երոպացի ու հրեա ուսումնասիրողները շումերականից ավելի կարևոր նշանակություն են տվել եգիպտական խրատական գրականությանը, որն, ինչպես հայտնի է, մեծ ազդեցություն է ունեցել սուրբգրային խմասպության գրականության, հարկապես՝ «Առակացի» վրա: Գիտնականներ Ա. Էրմանը, Մ. Լիխտեյնը և ուրիշներ, «Առակաց» գիրքը համեմատելով եգիպտական խրատների ժողովածուի՝ «Ամենեմոպի» հետ, եկել են այն եզրահանգման, որ «Առակացի» հեղինակը ծանոթ է եղել եգիպտական խրատներին: Այդ մասին են վկայում հարկապես Առակաց ԺԲ. 21՝

4 Տե՛ս S. Kramer, The Sumerians, Their History, Culture, And Character, The University of Chicago press, Chicago և London, 1963, էջ 224:

«Ահառասիկ ուսուցանեմ քեզ զբանս ճշմարիտս...», Առակաց Ժ. 24՝ «Ըստ կորսարեան շրջի ամպարիշը...», Առակաց ԻԱ. 20՝ «Եւ դու գրեա զնոսա յանձին քում երեքկին. ի խորհուրդ, եւ ի գիտութիւն, եւ ի հանճար...» եւ այլ խրատներ:

Ի. դարասկզբին լույս տեսած «Ամենեմոպի» անգլերէն թարգմանությունը, փաստորէն, ակնառու է դարձրել եգիպտական խրատների գործածությունը սուրբգրային իմաստության գրքերում, սաղմոսներում, ինչպես նաեւ Աստուծոյ Կարծիքի պատմություններում: Այն բաղկացած է երեսուն մասից, բովանդակում է խրատներ կամ խորհուրդներ, որոնց իմացությունը երկար դարեր պարտադիր է եղել իմաստասիր կյանքով ապրելու համար: Դրանք լայնորէն տարածված են եղել Եգիպտոսում - Բ. ծ. ա. 1300-1075 թթ. եւ բացառիկ նշանակություն են ունեցել եգիպտացիների հասարակական կյանքում: Նոյնիսկ երբ համարվում է եգիպտական թագավոր Կոնխիի որդի Ամենեմոպը, որի դպիրն այդ խրատները գրի է առել նրա ժառանգներին փոխանցելու նպատակով: Լիխտեյմի բնութագրմամբ՝ «եգիպտական խրատներում ամփոփված են երկիրը կառավարելու՝ թագավորների կենսափորձն ու բարոյական բարձր չափանիշները, որոնք պարտադիր կերպով փոխանցվել են սերունդներին՝ կարարյալ մարդու իրական կերպարը սրելովն ու համար»⁵:

Ինչպես նշեցինք, ուսումնասիրողներն առանձնակի կարևորություն են տալիս եգիպտական խրատներին, ու թերեւս այդ պատճառով մեզ չհաջողվեց գտնել շումերական եւ եգիպտական խրատների համեմատության որեւէ օրինակ: Դրանց առնչությունները ցույց տալու համար փորձենք շումերական մի քանի խրատ համեմատել եգիպտականի, Խիկարի եւ Առակացի հետ: Մինչ այդ նշենք, որ գոյություն ունեն եգիպտական խրատների եւ մի քանի ժողովածուներ, որոնք բովանդակային առումով բավականին նման են, ուստի եւ օրինակները քաղել ենք միայն Ամենեմոպից:

Շումերական	Ամենեմոպ	Խիկար	Առակաց
Դու որեւէ մեկին երաշխավոր մի՛ եղիր, այլապես քեզ հանգիստ չեն թողնի: Թույլ մի՛ տուր, որ երաշխավոր լինեն քեզ, այլապես կարհամարհեն քեզ..		Որդեանկ, փախիր յերաշխատութենէ, թէ ոչ՝ բազում վիշտ կրես եւ ոչ գերծանիս, մինչեւ հապուցես:	Որդեանկ, եթէ լինիցիս երաշխատոր բարեկամի քում, մարտնչեր գանձն քո թշնամոյ:
Ոչինչ մի՛ գողացիր, քան մի՛ ներխուժիր, մի՛ ձգտիր գանձեր ունենալ: Գողը աշուժի նման է, բայց բռնվելուց հետո դառնում է սպրուկ: Որդին, դու չպետք է կողոպտես, չպետք է ինքդ քեզ կացնի հարվածի տակ ղնես:	Մի՛ գողացիր եւ կերքո սեփական այգոյ:	Որդեանկ, լաւ է զի գողացնես զինչս քո, քան թէ գրգես ի վերայ քո գողութիւն:	

5 M. Lichtheim, Ancient Egyptian Literature, v. II, University of California Press, 1976, p. 98.

Ամուսնացած երիտա- սարդ կնոջ շուրջը մի՛ սպարվիր, սպարվի՞ր կարող է շատ դաժան լինել: Որդիս, ամուս- նացած կնոջ հետ սենյակի անկյունում չնստես:		Որդեակ, մի՛ շնար ընդ կնոջ ընկերի թո, զի մի՛ բարկասցի Աստուած եւ այլքն շնան ընդ կնոջ թո:	
Քո սարկուծու հետ մարմնական հաճույք- ներ մի՛ ունեցիր, այլա- պես նա թեզ հանգիստ չի թողնի:		Որդեակ, մի՛ մերձենար ի կին աղաղակող եւ լե- զուանի եւ անզգամ, զի կորուստ բերեւ անձին:	
Կովի առիթներ մի՛ փնտրիր, մի՛ սպորաց- րու ինքդ թեզ, պոռ- պախոս մի՛ եղիր, այն- ժամ կվսարահեն թո խոսքերին:	Վեճի մի՛ բռնվիր վրդովված մարդու հետ, ոչ էլ խայթիր նրան թո խոսքերով: Դադար փութ ինք- նակոջի առջեւ, հան- դարսկիր խոսելոց առաջ:	Որդեակ, ընդ առն լե- զուանոյ մի՛ կռուիլ, զի այնպես է, որպես թե ի վերայ երոյ փայտ դի- զես: Որդեակ, պահեա զլե- զու թո ի չարախօսու- թենեւ եւ զաչ թո յարստ հայելոյ...	Մի՛ փար պարասխա- նի անզգամի ըստ նո- րա անզգամութեանն. զի մի՛ լինիցիս նմա- նաղ նմա: Այլ փութ նմա պարասխանի ըստ անզգամութեան նորա. զի մի՛ իմաստ- նագոյն երեսեցի յանձն իւր:
Ճամփա մի՛ ընկիր գիշերը, այն կարող է թաքցնել թե՛ բարին, թե՛ չարը:		Որդեակ, ի գիշերի առանց գինու ի ճանա- պարհ մի՛ ելանիցես, զի ոչ գիտես թե՛ ի թշնա- մեաց թոց ո՞ր ելանիցե ընդ առաջ թո:	
Ոչ մեկի հետ գողաց- ված ուրելիք մի՛ կեր: Քո ձեռքը մի՛ թաթա- խիր արյան մեջ:		Որդեակ, թեպէտ եւ քաղցեալ իցես, հաց, որ չէ թո, մի՛ ուրիցես:	
Մի՛ անիծիր, որպես- զի անեծքը հանկարծ չդիպչի թեզ...		Որդեակ, մի՛ անիծա- ներ զորդին թո, մինչեւ յրեսանես վաղջան նո- րա եւ մի՛ արհամար- հեսցես, մինչեւ պեսա- նեսցես զկարարածն եւ զվաղջանն եւ զշահն:	
Մի՛ խոսիր անփութո- րեն, այլապես ծուղա- կի մեջ կընկնես:		Որդեակ, խորհեա զբանս ի սրտի թում եւ ապա ի վեր հանցես, զի թե փոխես զբանսն, ծաղոյ լինիս: Եւ մի՛ հա- ներ բան դարարկ ի բե- րանոյ թումմէ...	Որ պահեւ զբերան իւր եւ զլեզու՝ պահեւ ի նե- ղութենէ զանձն իւր:
Մի՛ ձգիր դեպի այն ջուրը, որին չես կարող հասնել:		Ընդ հարուցեալ կամ ընդ տառուցեալ գետոյ մի՛ անցաներ, զի մի՛ յանկարծամահ լինի- ցիս:	

Տուն մի՛ շինիր գոռո- զամիս մարդու հետ, նա քեզ սպրով կդարձնի:	Մի՛ ընկերացիր ամբարշտի հետ, ոչ էլ գրուցիր նրա հետ: Զսպիր լեզուդ վերա- դասին պապասխան փախուց, զգուշ եղիր, որ հանկարծ չվիրա- վորես:	Որդեանկ, չար, անմիտ է լեզուանի եւ ամբար- հաւաճ մարդ ի փուն քո մի՛ փանիր, զի ի գործոց նորա ամօթու լինիս:	
Որդին, բռնություն մի՛ գործադրիր եւ ոչ մեկին մի՛ լկիր:		Որդեանկ, մի ցանկար մարդոյ արեան եւ մի՛ սիրիր զկռիւ...	
Մեծ ունեցվածքը կա- րող է վարելվել, բայց իմ փոքրիկի հետ ոչինչ չի կարող հավասար- վել:	Լավ է քիչ՝ Աստուծո ողորմությամբ, քան շատ՝ սխալ ճանա- պարհով ձեռք բեր- ված:	Լավ է ու մի պարարագ ի փան քում, քան զուս- րակ մի ի փան այլոց:	Լաւ է պարառ մի համով խաղաղու- թեամբ, քան զփունս լի զենկեաւք եւ բարեաւք թշնամութեամբ:
Չարախոսի աչքերը միշտ հետեւում են, եր- բեք մի՛ զգա նրա ներ- կայությունը, թույլ մի՛ փութ, որ նա ազդի քեզ վրա:		Որդեանկ, թէ պարա- հիցէ քեզ արեւին քո չարով, եւ դու ընդ առաջ նորա բարով:	Յամենայն ժամա- նակս աչք չարաց՝ սպասեն չարեաց, իսկ բարիքն՝ հանդարտեն յամենայն ժամ:
Մի՛ ընդդիմացիր քե- զանից հզոր մարդուն: Մի՛ քանդիր դրսի պա- րը:	Երբ քեզանից հզորին հանդիպես դրսում, հարգալից եղիր նրա հանդեպ: Ձեռք մեկ- նիր փարեցին, հար- գիր նրան իր որդու պես:	Որդեանկ, այր որ խիստ է քան զքեզ, մի՛ հակա- ռակիր ընդ նմա: Որդեանկ, զբանս հզո- րաց մի՛ հոգասցես, եւ որ մեծ է քան զքեզ, ծառայես նմա, զուցէ սպանանիցէ զքեզ:	
Դաւորողություններ մի՛ արա, երբ գարեջուր ես խմում:		Որդեանկ, եթէ գինի ըմ- պես, պահես զլեզու քո ի շարախօսութենէ եւ բարի լինի քեզ, եւ կոցիս իմաստուն:	
Ունենալ իշխանությո- ւուն, իրավունք եւ հավատարիմ լինել Արծուն: Որդիս, դու պէտք է համեստ լինես իշխանավորի առջեւ, միայն այդպես կհաղ- թես ամբարշտին:	Պահպանիր քո լեզուն չար բաներ խոսե- լուց, այն ժամ կսիր- վես ամենքի կողմից: Դու քո փեղը կզրկես փաճարում եւ բաժին կստանաս քո փիրոց ընծաներից:	Որդեանկ, բարակացո զմիս քո հեզութեամբ եւ կակդացո զլեզու քո քացրութեամբ եւ լեր առաքութեամբ եւ բա- րութեամբ առ ամենայն ոք եւ հանգստեամբ վճարես զժամանակս կենաց քոց:	
Մորդ հետ կռուիր մի՛ խոսիր, դա արելությո- ւուն կառաջացնի քո հանդեպ: Կասկածի փակ մի՛ առ մորդ եւ քո Աստուծո խոսքերը: Նայ- րը նման է Աստուծո, նրա խոսքերն արժանահա- վար են: Նոր խրատ- ները պէտք է ընդունել:		Որդեանկ, սիրես զհայր քո, որ ծնաւ զքեզ եւ գա- նէ՞ծս հօր եւ մօր քո մի՛ առցես, զի ի բարութիւն որոց քոց խնդասցես:	Որդեանկ, պահես զարեւն հար քոյ, եւ մի՛ մերժեր զխրատ մար քոյ:

Մի՛ սպանիր...		Որդեակ, մի՛ լինիր ծառաի արեան ընկերի թո, զի կթիւ արեամբ ծարաի է եւ ի կոռոյ վնաս բազում լինի եւ ի վնասէ բազում մահ գործի:	
	Ականջ դիր, թե՛ քեզ ինչ եմ ասում, եւ դիմիր սրտիդ, քանի որ դա է բարին քեզ համար: Թույլ քուր, որ այդ խոսքերը մնան որովայնիդ մեջ, որպեսզի սեպ դնեն լեզվիդ:		Բանից իմաստունց մարտ գունկն թո, եւ լուր բանից ինոց. եւ հասարարեա գսիրոյ թո՝ զի գիտասցես զնոսա՝ թէ՛ բարի են: Եւ եթէ արկցես զնոսա ի սրտի թում. եւ զուարճասցի միանգամայն ի շրթոնս թո:
	Նկրելիր այս երեսուն խորհուրդներին, դրանք իմաստունացնում եւ կրթում են:		Եւ դու գրեա զնոսա յանձին թում երեք կին. ի խորհուրդս, եւ ի գիտութիւն, եւ ի հանճար:
	Մի՛ ընկերացիր անգուստ մարդու հետ, ոչ էլ զրույցի բռնվիր, մի՛ շրապիր հավարարիմ լինել նրան, որպեսզի հետո չուսահալվես.		Մի՛ լինիր ընկեր առն բարկացողի, եւ ընդ բարեկամի զայրացողի մի՛ բնակեր:
	Նաց մի՛ կեր թո քիրոջ առջեւ, մի՛ շրապիր խոսել թո առաջնորդի ներկայությամբ:		Յորժամ նարիցիս յընթրիս ուրել ի սեղան հզարաց. իմանալով իմաստի որ ինչ առաջի դնիցի, եւ ապա միտեցիր զձեռն թո:
	Ականջալուր եղիր այն խոսքերին, որ ասվում են քեզ, եւ թող սիրտդ մեկնի դրանք:		Տուր ի խրաւր գսիրոյ թո. եւ զլսելիս թո պարարաստեա բանից իմաստութեան:

Ինչպես արեանում ենք, բերված շումերական փաստիւր խրաւրներից վեցը փոխանցվել են եգիպտականին, փաստիւր՝ Խիկարին, երկուսը պահպանվել են բոլորի մոտ, իսկ եգիպտական վեց խրաւրներ անցել են «Առակաց»-ին: Ուշագրաւ է հարկապես այն, որ շումերական հայտնի «Մի՛ ընդդիմացիր քեզանից հզորին» խրաւրը, որ պահպանվել է թե՛ եգիպտականում, թե՛ Խիկարի մոտ, չի հանդիպում «Առակացում», այլ միայն «Մի-րաքում», մինչդեռ այս խրաւրն այնքան բարձր է գնահատվել անտիկ շրջանում, որ վե-

րագրվելով հույն նշանավոր գրող Նեսիտոսին (-Ք. ծ. ա. Ը.-Է. դդ.), փեղ է գրել «Գիրք Պիլոտից»-ում՝ «Յիմար է, որ ընդ վեհա քան զինքն հակառակ է» ձևով: Այսպիսով, վերոնշյալ համեմատությունը վկայությունն է այն բանի, որ շումերական խրապները գրեթե ամբողջապես պահպանվել են Խիկարի մոտ, դրանց զգալի մասը փոխանցվել է եգիպտականին, իսկ ավելի ուշ, վերագրվելով հրեա իմաստուններին, դրանք ներառվել են Սուրբ Գրքում, առավելապես՝ Սիրաքում:

Նին կրակարանի իմաստության գրքերը, ինչպես գիտենք, համարվում են **հրեական իմացաբանական գրականության** փայլուն նմուշներ: «Առակացը» և «Ժողովողը» կանոնի մեջ մտնել են բավականին ուշ, եթե ոչ՝ վերջինը. կանոնը կազմելու ժամանակ՝ -Ք. հ. Ա. դ., ոչ ոք չի կասկածել, որ դրանց հեղինակը՝ Դավթի որդի Ժողովողը, Սողոմոն թագավորն է եղել, որին ավանդադրույցը բացառիկ իմաստություն է վերագրել: Նկարագայում պարզվել է, որ պարմական Սողոմոնն ապրել է -Ք. ծ. ա. Ժ. դարի առաջին կեսին, ուստի նա չէր կարող այդ գրքի հեղինակը լինել: Բացի այդ, հեղինակն իրեն կոչել է «Երուսաղեմի թագավոր», մինչդեռ պարմական Սողոմոնը նման փիպղոս չի կրել, -Ք. ծ. ա. Զ. դարից սկսած Պաղեստինում թագավորներ չեն եղել, կարճ ժամանակով նրանք հայտնվել են միայն -Ք. ծ. ա. Բ.-Ա. դարերում: «Առակացը» Սողոմոն թագավորին վերագրելու համար հիմք են ծառայել «Երրորդ թագադրությանը» գրքի հետևյալ փողերը՝ «Եւ խօսեցաւ Սողոմոն երիս հազարս առակս. և էին օրհնութիւնք նորա հինգ հազար»:
Սակայն հետազայում կասկածի փակ է առնվել ոչ միայն Սողոմոնի գրչին պատկանելու, այլև մեկ հեղինակի կողմից գրված լինելու հարցը, քանի որ «Առակացի» առանձին հափվածներ միմյանցից փարբերվում են թե՛ կառուցվածքով, թե՛ բովանդակությամբ: Այս խնդրի առնչությամբ արևելագետ Ի. Դյակոնովը գրել է. «Նուդայական Սրբազան գրվածքի մեջ չմարձ գրքերը չէին արգելվում ընթերցանության համար, դրանք միայն համարվում էին «ոչ աստվածաշնչային», ընդ որում, ռաբբիների մի մասը դա չէր ընդունում նաև «Ժողովողի» և «Երգ երգոցի» կապակցությամբ: Բայց կանոնից մի քանի գրքեր հանելը հանգեցրեց, որ դրանք հավաքացյալ հրեաների կողմից դադարեցին ընթերցվել, և այդ գրքերը պահպանվել են միայն քրիստոնեական Բիբլիայի մեջ՝ հունարեն և այլ թարգմանություններում»⁶: Դյակոնովը նաև նկատել է, որ «մեզ անհայտ հեղինակները, անխուսափելիորեն ելնելով իրենց ամօնը դրված գաղափարական-կրոնական խնդիրներից, պետք է օգտվեին այն ժամանակ միակ գոյություն ունեցող պարմական կամ կեղծ պարմական վկայությունների ակունքից: Այդ ակունքը կարող էր լինել միայն ժողովրդական հիշողությունը (էպոս, բանահյուսություն): Ճիշտ այդպես, ժողովրդական իմաստությունը և ժողովրդական երգային լիրիկան ընկած են այնպիսի գրքերի հիմքում, ինչպես «Սողոմոնի առակները», «Երգ երգոցը» և այլն: Թե՛ բաբելական, թե՛ փյունիկյան, հին հրեական ու հին եգիպտական գրականություններն օգտվել են ժողովրդական իմաստության մեկ ընդհանուր հիմքից՝ Նին Արևելքի ժողովուրդների բանահյուսությունից»⁷:

Այդ հիմքը, ինչպես վերևում պարզորոշ փեսանք, ոչ թե սեմական, այլ շումերական

6 «Նին Արևելքի պոեզիա», Երևան, 1982, էջ 543:

7 Անդ, էջ 544:

գրականությունն է, որում ամբարված իմաստությունը զարմանալի ճշգրտությամբ պահպանվել է հիմնականում արամացի իմաստուն Խիկարի խրատներում, որից էլ փոխանցվել է հունահռոմեական, պաղլավական, արաբական, հայկական, իսկ ավելի ուշ նաև սլավոնական ու երոտական միջնադարյան գրականություն:

Անվանի գիպրոսական Ֆրանսուա Նոն, զուգահեռներ անցկացնելով Խիկարի և Տին կրակարանի իմաստության գրքերի միջև, նկատել է. «Ժողովողի և Խիկարի բնագրային նմանությունները գալիս են ոչ թե նրանից, որ Խիկարի խմբագիրը եղել է հրեա և օգտվել է Ժողովողի հրեական բնագրից, ինչպես կարծում է Ֆերթերը, այլ որ Ժողովողի խմբագիրը ծանոթ է եղել Խիկարի խրատներին, «թերևս արամեերենով», չնայած հավանական է արամեերենից թարգմանված եբրայական օրինակի գոյությունը, որին մինչ այժմ չենք հանդիպել»⁸: Խիկարի արամեական բնագրին անդրադարձել ենք առանձին հոդվածով⁹, այժմ մի քանի օրինակով ցույց տանք Խիկարի և Սիրաքի խրատների նմանությունները, որ վաղուց զբաղեցրել են ուսումնասիրողներին:

Խիկար	Սիրաք
Տրամութեան մի՛ փար զանձն քո եւ ի խորհուրդս մի՛ նեղեր զքեզ: Կեանք մարդոյ ուրախութիւն սրբին է:	Տրամութեան մի՛ փար զանձն քո եւ ի խորհուրդս մի՛ նեղեր զքեզ: Կեանք մարդոյ ուրախութիւն սրբի:
Որդեակ, ընդ առն լեզուանոյ մի՛ կռուիլ, զի այնպէս է, որպէս թէ ի վերայ հոյ փայտ դիզես:	Ընդ առն լեզուանոյ մի՛ կռուիր, զի ի վերայ հոյ փայտ դիզես:
Որդեակ, մի՛ գնար մէն ընդ առն բարկացողի եւ մի՛ կարգիր ընդ նմայ, զի յաչս նորա թեթեւ թվի արին քո:	Մի՛ գնար մէն ընդ առն բարկացողի եւ մի՛ կագիր ընդ նմա, զի յաչս նորա թեթեւ թուի արին:
Որդեակ, այր որ խիստ է քան զքեզ, մի՛ հակառակիր ընդ նմա:	Մի՛ հակառակիր ընդ առն հզարի, գուցէ անկցիս ի ձեռս նորա:

Խիկարի խրատները վերագրվել են ոչ միայն հրեա իմաստուններին, այլև հույն մեծանուն փիլիսոփաներին: Իր «Աշխարհագրություն» գրքում Ստրաբոնը նշում է մի քանի հռչակավոր իմաստունների անունները, այդ թվում՝ Ախայիկարոսի, այսինքն՝ Խիկարի. «Իմաստուններն այն աստիճան պատվավոր տեղ էին զբաղում, որ արժանի էին համարվում թագավորության, որովհետև իրենց կենդանության ժամանակ և մահից հետո նրանք բերում էին մեզ աստվածների պատգամներն ու նախազգուշացումները»¹⁰: Նայքունի է, որ Ք. ծ. ա. Ե. դարի երկրորդ կեսին Խիկարի խրատները հունարեն է թարգմանել հույն փիլիսոփա Դեմոկրիտը, որը նաև գրել է «Բաբելոնյան ուսուցում» գիրքը. «Ըստ Կոննա Ալեքսանդրացու հայտնի վկայության, Դեմոկրիտի գրած խրատական ասույթները պարկանում են բաբելոնյանի: Ասում են, որ նա թարգմանել է Ախիկարի կորոշի գրությունները, հետո դրանք կցել է իր ստեղծագործություններին, սկզբից հավելելով՝ «Այսպես ասաց Դեմոկրիտը»: Ավելի ուշ այդ պատմությունը նյութ է դարձել Թեոփրաստ-

8 F. Nau, Histoire et sagesse d'Ahiqar l'Assyrien, p. 111:

9 Տե՛ս «Էջմիածին», 2012, ԺԲ., էջ 35:

10 Ստրաբոն, Աշխարհագրություն, XVI, 2, 39, էջ 762:

պոսի «Ախիկար» սրեղծագործության համար: Սրբաբունը խոսում է մարգարե Ախիկարի մասին, որն ապրում էր Բոսֆորում և այնպեղ դպրոց էր հիմնել հնդիկ հիմնաստ-փեսայների և պարսիկ մոզերի հետ: Այլ կերպ ասած, Ախիկարը Նունասպանում հայրնի էր որպես Բաբելոնի ամենախմասպուն մարդկանցից մեկը: Նրա ասույթների՝ հույներին ծանոթ լինելու մասին են վկայում Մենանդրոսի (Ք. ծ. ա. 342-290 թթ.) քաղվածքները, որոնց նա ծանոթացել է Դեմոկրիտից ընդօրինակելու միջոցով»¹¹:

Նույն աղբյուրի փեղեկագմամբ՝ մեզ է հասել բարոյական խրատների մի ամբողջական ժողովածու՝ «Դեմոկրիտի ասույթները» վերնագրով, որը մեծ մասամբ պահպանվել է Սյոբեռոսի ժողովածուներում. «Դեպք է հիշել, որ թե՛ Սյոբեռոսը, թե՛ «Դեմոկրիտի ասույթները» կազմողը չեն եղել միակ ներկայացուցիչները այն ժամանակ լայն տարածում գրած խրատական գրականության, որն ամբողջապես ընդօրինակվել է հնագույն, հնարավոր է, Դեմոկրիտի կենդանության օրոք կազմված և ընտրված ասույթներից: Դրանց մեջ փեղ են գրել նաև նրա մարքերը, ուստի և այն կրել է «խրատներ» անվանումը»¹²: Նշյալ աշխարության մեջ գերեզման են Դեմոկրիտի բարոյական ասույթները, որոնց ժողովրդական ակունքներն ավելի քան ակնհայտ են: Մեջբերենք դրանցից մի քանիսը. «Լավ է գիտունների մխիթարանքը, քան փղեղների հարստությունը», «Քշախոսությունը կնոջ գարդն է, կնոջը գարդարում է նաև շքեղ արդու-գարդի բացակայությունը», Դեմոկրիտն ասել է՝ «Ով լավ փեսա ունի, որդի է գրել, ով հիմար փեսա՝ կորցրել է դստերը», «Ավելի լավ է ուրիշը մեզ գովի, քան ինքներս մեզ», «Խելամիտ է նա, ով չի փխրում չունեցածի համար, այլ ուրախանում է ունեցածով», «Երջանկության ժամանակ հեշտ է ընկեր գտնելը, իսկ դժբախտության ժամանակ չափազանց դժվար», «Մեկ խելամիտ մարդու ընկերությունն ավելին է, քան բոլոր անխելամիտների», «Ավելի լավ է մտածել գործելուց առաջ, քան հեղտ» և այլն: Մանրամասն ընկալությունը հեղինակին բերում է այն եզրահանգման, որ Խիկարի խրատներն անսխալ շրջանում լայն տարածում են գրել Դեմոկրիտին վերագրվելու միջոցով:

Ի տարբերություն հունականի, հռոմեական գրականության մեջ խիկարյան առնչությունների մասին բոլորովին չի ակնարկվում, նշվում է միայն Մ. Կապունի (Ք. ծ. ա. Գ.-Բ. դդ.) անունը, որի հեղինակած «Որդի Մարկոսին» տրակտատի մասին պահպանվել են կցկտուր փեղեկություններ, քանի որ ամբողջական բնագիրը չի պահպանվել: Այն ունեցել է խրատական բովանդակություն, բոլոր խրատները, ինչպես վերնագիրն է հուշում, ուղղված են եղել իր որդուն: Նուագույն ձևով կազմված այդ հանրագիրարանում ներառվել են նաև հռոմեացի գործչին անհրաժեշտ բոլոր գիտելիքները¹³: Անսխալ գրողներն այնպեղ ից քաղել են մի շարք ասույթներ՝ «Ծուլությունը մայրն է բոլոր չարիքների», «Գնիր ոչ թե այն, ինչ անհրաժեշտ է, այլ այն, առանց որի չես կարող ապրել» և այլն:

Այժմ անցնենք պահլավական գրականությանը, որպեղ, ինչպես նշում է Բ. Չու-

11 Г. К. Баммел, Демокрит в его фрагментах и свидетельствах древности, Москва, 1935, էջ 340.

12 Անդ, էջ 339:

13 Տե՛ս И. М. Троянский, История античной литературы, Ленинград, 1947, էջ 316:

գասգյանը, «խրապը հավասարագոր է եղել գիտությանը»: Վաղ միջնադարյան Իրանում մեծ փարաձուձ են գրել Նուշիրվանի խրապները, որոնք ավելի ուշ թարգմանվելով նոր պարսկերեն և այլ լեզուներով, առապոքեն օգտագործվել են գեղարվեստական գրականության մեջ՝ դառնալով ժողովրդի սեփականությունը: «Մերձավոր Արևելքում Նուշիրվանի խրապները մեծ ճանաչում են ստացել Ժ. դարից: Խրապականի մեջ առկա բազմաթիվ արաբական փոխառություններ և ոճեր պարսիկ բանասերներին հանգեցրել են այն եզրակացության, որ այն թարգմանություն է արաբերենից: Արաբական արաբերակը հավանաբար կազմվել է այն օրերին, երբ արաբական աշխարհում պահլավ աղբյուրները հախումն կերպով թարգմանվում էին արաբերեն Ը.-Թ. դարերին, ճիշդ այնպես, ինչպես իրանական շապ հուշարձաններ պահլավներենից թարգմանվել են արաբերեն, այնուհետև՝ արաբերենից պարսկերեն, նույնն էլ պարսիկ է Նուշիրվանի խրապականի հետ»¹⁴:

Ուշագրավ է Բ. Չուգասգյանի արգահայտած այն միտքը, թե խրապականի խորհուրդները Նուշիրվանի հրամանով հավաքել են պալատական իմաստունները. «Ասակա՞ծի ենթակա չէ, որ խնդրո առարկա խրապականում նույնությամբ բերված են ժողովրդական բազմաթիվ խրապներ, առածներ և ասացվածքներ: Նկարագրվի է, որ Նուշիրվանի խրապներից շապերը նույնությամբ կրկնվում են նաև այլ խրապականներում, բազմաթիվ բանասերողծների ու գրողների ստեղծագործություններում: Մի դեպքում դրանք հավասարում են Նուշիրվանի խրապականից օգտվելու հանգամանքը, իսկ մեծ մասամբ ինքնին ապացուցում են, որ այդ ընդհանրությունների հիմքում ժողովրդական բառ ու բանից օգտվելու իրողությունն է»¹⁵:

Իր ներածականում Չուգասգյանը դրանք համեմատում է արաբական իմաստուն Լոկման Նեքիմի (իմաստունի) խրապների հետ, սակայն բնավ չի խոսում Իսկաթի և Նուշիրվանի նմանությունների մասին: Բերենք մի քանի օրինակներ:

Իսկաթ	Նուշիրուան
Եւ մի՛ լինիր յաջս անձին քում իմաստուն, յորժամ ի բազմաց ոչ վկայիցիս:	Դուք գձեզ մեծ մի՛ րեսնուք:
Որդեակ, խորեհա զբանս ի սրտի քում եւ սալս ի վեր հանցես:	Անալարեհ խօսք մի խօսիք:
Որդեակ, ընդ առն լեզուանոյ մի՛ կռուիլ, զի այնպէս է, որպէս թէ ի վերայ հրոյ փայտ դիզես:	Ընդ մարդ իսկի մի վիճիք:
Որդեակ, այր որ խիստ է քան զքեզ, մի՛ հակառակիր ընդ նմա:	Առ թագաւորն պարտաստ եւ ահարկու կացէք:
Որդեակ, պարտուսա զհայր եւ զմայր քո, եւ ի հասանել որոյց քոց ուրախ լինիցի անձն քո:	Զհօր եւ զմօր հարկիքն մեծ րեսէք:

14 «Խրապը Նուշիրուանի», աշխատ.՝ Բ. Չուգասգյանի, Երևան, 1966, էջ 15:

15 Անդ, էջ 18:

Որդեակ, մի՛ մերժենար ի կին աղաղակող եւ լեզուանի եւ անգգամ, զի կորուսար բերէ անծին:	Ի լեզուանի կնոջէ պարարասար կացէք:
Որդեակ, զխորհուրդս քո մի՛ յայտներ այլում եւ ասել, թէ կու ծածկէ նա:	Զծեր խորհուրդն մարդկանց մի՛ ասէք:

Ինչպես արդեն նշեցինք, արար իմաստուն Լուծման Ներքիմի խրատները խորապես առնչվում են Նուշիրվանի խրատներին, բանգի երկուսն էլ սերում են նույն՝ հինարեւելյան խրատական գրականության ակունքներից: Պահլավական գրական հոսանքների ներխուժմամբ **արաբական գրականության մեջ** եւս խրատը նշանակալից փոխում էր: Եւ որ եւ ունենում, սրբեղծվում են խրատական բովանդակությամբ գործեր, որոնցից առաջինները պարզապես են իրանական ծագմամբ արար գրող, արաբական մշակույթի վաղ «ասկե դարի» փայլուն դեմքերից մեկին՝ Աբդալլա Իբն ալ-Մուկաֆֆային (720-756 թթ.): Նրա գրական ժառանգության կարեւոր մասն են կազմում «Խրատներ մեծ գործերի համար» եւ «Խրատներ փոքր գործերի համար» գրքերը, որոնք գրվել են պարսկական աղբյուրների հիման վրա, իսկ որոշ մասը թարգմանվել է պահլավերենից: Ներքինակն ընթերցողին խորհուրդ է տալիս յուրացնել հին ժողովուրդների իմաստությունը, զարգացնել ու հարստացնել միտքը՝ կյանքում մեծագույն նվաճումներ ունենալու համար: Այդ գործերի վրա զգալի է հունական, պարսկական, եւ՝ միջնորդաբար, հնդկական փիլիսոփայական մտքի ու մշակույթի խոր ազդեցությունը: Քանի որ Զ. դարը սասանյան մշակույթի ծաղկման ժամանակաշրջանն էր, ուստի Խոսրով Անուշիրվան Ա.-ի օրոք (531-579) թարգմանվել են նաեւ հնդկական բանահյուսության շար նմուշներ՝ «Բարեղամի եւ Նովասափի գրույցը», Սինդբադի արկածները, հնդկական հեքիաթները, որոնք հետագայում դարձել են «Նազար ու մի գիշերների» նախահիմքը: Այսպեղ հարկ է նշել, որ հինարեւելյան, մասնավորաբար Խիկարի խրատները ներթափանցել են նաեւ եթովպական գրականություն, հարկապես հռչակավոր «Բանք իմաստասիրաց», որի տասնհինգ խրատները հանդիպում են Խիկարի բոլոր խմբագրություններում:

Այսպիսով, ուրվագծելով հինարեւելյան խրատական գրականության տարածման հիմնական ուղիները՝ կարող ենք հստակորեն մարմնակերպել, որ շումերներից սկսած իմաստության գրականությունն առաջնային նշանակություն է ունեցել նշյալ բոլոր ժողովուրդների կյանքում: Խրատանիները հավասարազոր են եղել կյանքի հանրագիտարաններին, ուսուցանել են բարոյական համընդհանուր բարձր արժեքներ, որոնք նախ պարտադիր են եղել արքայական ընտանիքների, եւ ապա՝ հասարակ ժողովրդի համար: Միջագետքում փայլուն կրթություն ստացած Մեսրոպ Մաշտոցն, անկասկած, կրողն էր այդ դարավոր իմաստության, որն իր ժողովրդին էր փոխանցվել բանավոր ու գրավոր ճանապարհներով, ուստի եւ Սուրբ Գրքի թարգմանությունն իմաստության գրականությունից սկսելու նրա որոշումը չէր կարող զուր պատահական երեւոյթ լինել:

Այս առումով փոխում է նշել, որ Արշակ Այլոյաճյանը, անդրադառնալով «Առակացի» թարգմանությանը, միանգամայն ընդունելի է համարել Ն. Ն. Ակինյանի հետեւյալ փնտալերը. «Մաշտոց առ ի փորձ եթէ ամենէն առաջ Սողոմոնի Առակաց գիրքը թարգ-

մանեց, ապահովաբար անոր համար էր, որ ան մանր խրատական ասացածքներով յարմար էր թերակիրթ մանուկներուն իբր ատաջին ընթերցանութեան դասագիրք ծառայելու»¹⁶։ Չպէտք է մոռանալ նաև, որ հայ մարտնագրութեան մեջ Ե. դարից սկսած՝ խրատական գրականութիւնն ունեցել է գլխավորապէս կրթադաստիարակչական նշանակություն։ Դրա վառ ապացույցն են Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Անանիա Նարեկացու և այլոց խրատները, ինչպէս նաև «Գիրք պիտոյից» ճարտասանական ձեռնարկը, որը երկար դարեր գործածվել է ոչ միայն հայերի, այլև շատ ժողովուրդների կրթական համակարգում։ Նույն գործառնություն են ունեցել նաև Խիկար Բմաստունի խրատները, որոնց հայերեն բնագրերը թեպէս թվագրվում են ԺԳ.-ԺԴ. դարերով, սակայն առանձին խրատների մուտքը հայ մարտնագրություն սկսվում է Ե. դարից։

Ի մի բերելով վերոնշյալ նյութը՝ կարող ենք պնդել, որ հինարևելյան խրատները հնուց ի վեր փարածված են եղել նաև Տայկական լեռնաշխարհում, և խրատանիներով սերունդ կրթելու ավանդույթն ընդունված է եղել ոչ միայն շումերական, եգիպտական, հրեական, հունահռոմեական, պաղտական, արաբական, այլ նաև հայոց արքայական ընտանիքներում՝ Ուրարտական հզոր թագավորությունից սկսած։ Դյուրությամբ ընկալվելով՝ այդ խրատները դարձել են նաև հասարակ ժողովրդի սեփականությունը, հարստացրել ու կրթել են նրա միւրքը։ Բմաստունություն ու խրատ ճանաչելու հորդորով սկսվող «Առակաց» գիրքն ատաջին հերթին թարգմանելու Մաշտոցի որոշումն ամբողջապէս ըմբռնելի է դառնում պարմամշակութային այս կարևոր գործունը շեշտելով։

16 Արշակ Արայանճեան, Պարմութիւն հայ դպրոցի, Խր. Ա., Կահիրէ, 1946, էջ 63։